



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 նոյեմբերի 2023 թվականի N114-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՅՈՒՄՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տարամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով Գորիս համայնքի կողմից 2024 թվականի համար ներկայացված հետևյալ ծրագրային հայտերին՝
  - 1) Գորիս համայնքի Գորիս քաղաքի, Գալստյան փողոցի 60/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի վերակառուցում,
  - 2) Գորիս համայնքի Գորիս քաղաքի Գարեգին Նժդեհի թիվ 22 հասցեում մանսարդային հարկում բնակելի տների կառուցում,
  - 3) Գորիս համայնքի Գորիս քաղաքի Գետափնյա թաղամասի 1,2,3,4,5,6 բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացում, տանիքի վերակառուցում, մանսարդային հարկերի ստեղծում,
  - 4) Գորիս համայնքի տիպային ամենախոշոր նախադպրոցական ուսումնական հաստատության՝ թիվ 7 մանկապարտեզի գլխավոր մասնաշենքի նորոգում,
  - 5) Գուսան Աշոտի անվան մշակույթի տան հիմնանորոգում ,
  - 6) Գորիս քաղաքի ներհամայնքային ճանապարհային ցանցի հիմնանորոգում՝ Հին Վանքի տափ թաղամասի մի հատվածի, հարակից բնակելի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում: Ա. Բակունցի փողոցի/ Գ. Նժդեհի փողոցի խաչմերուկից մինչև Սաթյան փողոցի խաչմերուկ/, Գ Կարապետյան փողոցի/ Զինվորական պանթեոնի հարակից տարածքից մինչև Նոր վանքի Տափ թաղամասի Արցախյան խճուղու մուտք/, Խորենացի փողոցի մի հատվածի/ Կոմիտասի փողոցի խաչմերուկից մինչև Քրիստափորի փողոցի խաչմերուկ, Գ. Տաթևացի փողոցի մի

հաված, Մովսես Խորենացու Խաչմերուկից մինչև Վ. Մամիկոնյան փողոցի խաչմերուկ , Այգեստան փողոցի մի հատվածի/ Քրիստափորի փողոցի խաչմերուկից մինչև Ֆուտբոլի մարզադաշտ/ կապիտալ նորոգում:

2. Համայնքի ղեկավարին՝ սահմանված ժամկետում սույն որոշմամբ հաստատված սուբվենցիայի ծրագրային հայտերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ  
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ  
ԱՌՈՒՍԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ  
ԳԱԼՍՅԱՆ ԱՆԻ  
ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ  
ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ  
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ  
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ  
ՏՈՌՈՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ  
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 23  
ք. Գորիս

